ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.05.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-40/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2014թ. N 73-1/695421-14 գրությամբ ներկայացված «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02209604) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 27.05.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 07.11.2014թ. N 73-1/695421-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

2. <u>«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 15.12.2014թ. N 09/032-2051 գրությամբ դիմել է «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին:

«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ն 21.01.2015թ. N 439-2 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.02.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1» ծածկագրով պայմանագիր, սակայն գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի և նախագծի միջև ի հայտ են եկել լուրջ հակասություններ, որի մասին Ընկերությունը բազմիցս տեղեկացրել է Երևանի քաղաքապետարանին և Շենգավիթ վարչական շրջանին, սակայն հարցը լուծում չի ստացել:

«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 16.12.2015թ. ժամը 15:45-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը 29.12.2014թ. Կենտրոնին է տրամադրել Երևանի քաղաքապետարանի և «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.02.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը:

Վերը նշված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված 12 000 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքի

աշխատանքներն Ընկերության կողմից չեն կատարվել, ինչի արդյունքում Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 16.12.2015թ. ժամը 15:45-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.05.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2014թ. N 73-1/695421-14 գրությամբ ներկայացված «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02209604) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-40/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2014թ. N 73-1/695421-14 գրությամբ «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.02.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշին փողոցի թիվ 43/2 շենքի տանիքի հիմնանորոգման երկու առանձին տեսակի աշխատանքներ՝ քանդման (7 աշխատանք) և կառուցողական (16 աշխատանքներ):

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 27.09.2014թ.:

4. Ընկերությունը Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ ծավալաթերթով նախատեսված աշխատանքները 27.09.2014թ. դրությամբ չի կատարել:

5. Պատվիրատուն 05.09.2014թ. թիվ 61/3122 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ Պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը համապատասխան գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերությունը մինչ օրս չի սկսել աշխատանքները: Միաժամանակ, Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ աշխատանքները չկատարելու, ինչպես նաև հիմնավորումներ և ապացույցներ մինչև աշխատանքների վերջնաժամկետը լրանալը, դրանց իրականացման վերաբերյալ, եթե Ընկերությունը նախատեսում է իրականացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

6. Ընկերությունը 23.09.2014թ. թիվ 021 գրությամբ Պատվիրատուին տեղեկացրել է, որ բազմաթիվ և մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ է եկել, որ նախագիծը կատարվում է բազմաթիվ և կոպիտ շինարարական նորմերի խախտումներով: Գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի և նախագծի միջև առկա են լուրջ հակասություններ, որոնք թույլ չեն տալիս կատարել Ընկերության պայմանագրային պարտավորությունները, քանի որ հակասում են շիննորմերին և ստանդարտներին:

7. Պատվիրատուն 05.09.2014թ. թիվ 61/3122 գրությամբ հայտնել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, Երևանի Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի և նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմող «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում նախագծային էական շեղումներ չեն հայտնաբերվել:

8. Պատվիրատուն 10.10.2014թ. թիվ 61/53813h գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.02.2014թ. կնքված կապալային աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1»

ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել է՝ ՀՀ քաղաքացիական 715-րդ հոդվածի և Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի հիմքով:

6. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքը, գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի 21.01.2015թ. N 439-2 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.12.2014թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.02.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1» ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագիր 1.1 կետի համաձայն՝ «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Նոր Նորքի վարչական շրջանի թեք տանիքների նորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև սեպտեմբերի 30-ը:

Նույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ն Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև 27.02.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/20-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի և նախագծի միջև ի հայտ են եկել լուրջ հակասություններ, որի մասին Ընկերությունը բազմիցս տեղեկացրել է Երևանի քաղաքապետարանին և Շենգավիթ վարչական շրջանին, սակայն հարցը լուծում չի ստացել:

Պատվիրատուն 05.09.2014թ. թիվ 61/3122 գրությամբ Ընկերությանը հայտնել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, Երևանի Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի և նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմող «ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում նախագծային էական շեղումներ չեն հայտնաբերվել:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ***Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ,*** ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից 10.10.2014թ. թիվ 61/53813h գրությամբ Պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***<u>եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդը արձանագրում է, որ «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չի ունեցել որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (10.10.2014թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.11.2014թ. N 73-1/695421-14 գրությամբ ներկայացված «Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02209604) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ենոքյան Գոռ**

Անդամներ՝ **Վարդանյան Սեդրակ**

Խաչատրյան Գևորգ